ռավարութեան Քրիստոնէից և ազատաց, բանիւ բերանով հարց և փորձ արասցէ իւրաքանչիւր տարակուսութիւն բանի, որ 'ի այսմ երևի և նովաւ գացի յատկապէս բացատրութիւն բարութեան իւրաքանչիւր հատոր գրեցելոյն իմոյ։

Եւ ես յուսամ 'ի Տէր, զի նշաւակս այս պատճառ լինիցի յարուցանելոյ իմաստնոց 'ի մոռացմանէ և յորդորեսցէ նոցայ, զի բանիւ իմաստութեամբ իւրեանց գերազանցապէս կազմեսցեն կառս, որ ընթանայ գնացս արդար Օրինօք՝ համեմատ բնութեան մերոյ բանականի, և ծառայ դիտուն, որ դիտիցէ կամս Տեառն իւրոյ՝ այսինքն Օրէնս իւր, կացուցանեն կառավարիչ 'ի վերայ նորայ, զի ընթանասցէ ընդ ճանապարհս իւր դիւրեաւ մինչև յաւիտեան, զի սովաւ կացցեն և ճնասցեն ամենայն մարդ 'ի յազգս իմ ազատ և թագաւոր և իշխան և Տէր 'ի վերայ ամենայն ստացուածոց իւրոց, զի ամենեքեանս միաբան ազատապէս բարեբանելով Արարիչն Աստուած մեր այժմ և միշտ և յաւիտեան։

Անօթն ընտրութեան Սուրբ Առաքեալն Պօղոս ցուցանէ մեզ բնական իրաւունս և արդարութիւնս ասելով՝ ամենայն ոք զոր ինչ խօսեսցի ունիցի վկայութիւն 'ի սուրբ գրոց. նմանս ըստ ասացելոյ Տեառն փրկչին մերոյ՝ թէ երկու և երիս վկայիւք հաստատեսցի ամենայն բան։

Նախ ձեզ ընթերցօղացդ և ամենայն հաւա-